ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի սեպտեմբերի 2- 7-ը

ք. Սինգապուր /Սինգապուրի Հանրապետություն/ գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն՝

Նաիրա Կարապետյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետը՝

ք. Սինգապուր, Սինգապուրի Հանրապետություն, 2018 թվականի սեպտեմբերի 2- 7-ը

4. Հրավիրող կողմը՝

Սինգապուրի Հանրապետության նախաձեռնությամբ

5. Գործուղման նպատակ

Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքման շուրջ բանակցությունների հինգերորդ փուլին մասնակցելու նպատակով

6. Քննարկված թեմաները՝

Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների հինգերորդ փուլի ընթացքում քննարկվել են վերոհիշյալ

Համաձայնագրի նախագծի առանձին բաժիններ, մասնավորապես՝ իրավական և հորիզոնական պարտավորությունները, փոխադարձ առևտրի դյուրացումն ու խթանումը, առևտրի պաշտպանիչ միջոցները, մաքսային, տեխնիկական կարգավորումը, մրցակցային քաղաքականությունը, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումները, էլեկտրոնային առևտուրը, պետական գնումները, էկոլոգիան և այլ բնագավառներին առնչվող խնդիրներ: Համաձայնագրի շուրջ վարվող բանակցությունների ընթացքում հիմնականում քննարկվել են նաև Համաձայնագրին կից ցանկերը, որոնց մեջ ներառված ապրանքատեսակների հանդեպ Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ: Նշված ցանկերում հայկական կողմից ներկայացվել են ՀՀ համար արտահանման հետաքրքրություն ունեցող մի շարք ապրանքատեսակներ:

Համաձայնագրի նախագծի նախնական տարբերակը՝ ըստ բաժինների, քննարկումների արդյունքում համաձայնեցված էր Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համապատասխան փորձագետների միջև կայացած խորհրդակցությունների ժամանակ:

Բանակցությունների շրջանակներում քննարկվել են նաև Համաձայնագրին կից ծառայությունների և ներդրումների մասին առանձին երկկողմ համաձայնագրերի նախնական տեքստերը: Քննարկումների արդյունքում սինգապուրյան կողմի հետ ձեռք բերվեց պայմանավորվածություն առ այն, որ Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի Հանրապետության միջև ծառայությունների և ներդրումների մասին երկկողմ համաձայնագրի մասով մանրամասն քննարկումը կիրականացվի ս/թ հոկտեմբերի 22-24-ը ք.Երևանում կայանալիք «Եվրասիական շաբաթ» միջազգային համաժողովի շրջանակներում՝ վերոհիշյալ Համաձայնագրի Սինգապուրի Հանրապետության կողմից պատասխանատու պարոն Վանգ Թոն Ջոնի այցի ընթացքում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաձայնագրի շուրջ քննարկումներին մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական միության անդամ

պետությունների, ինչպես նաև Սինգապուրի Հանրապետության առանձին ոլորտների մասով փորձագետներ:

Ոլորտային քննարկումների ժամանակ ներկայացվել են Կողմերի հիմնական տարաձայնությունները՝ Համաձայնագրի նախագծի առանձին բաժինների վերաբերյալ և արդյունքում մի շարք հարցերի ուղղությամբ կողմերի միջև ձեռք է բերվել համաձայնություն:

Մասնավորապես՝

Իրավական և հորիզոնական պարտավորությունները գլխի քննարկման ժամանակ Կողմերը մանրամասն քննարկեցին «Ընդհանուր դրույթներ», «Ինստիտուցիոնալ դրույթներ», «Թափանցիկություն», «Եզրափակիչ դրույթներ» և «Վեճերի կարգավորում» հոդվածները: Քննարկումների արդյունքում Կողմերը համաձայնության եկան առկա տարաձայնությունների մասով: Միաժամանակ, ներկայացվեց Միության հստակ դիրքորոշումը մի շարք հարցերի առնչությամբ, մասնավորապես՝ հակակոռուպցիոն միջոցառումների, հարկման կարգավորման, ինչպես նաև նշված Համաձայնագրին նոր անդամ պետության միանալու և դուրս գալու մասով: Կողմերը համաձայնեցրին «Վեճերի կարգավորում» գլխին կից արբիտրների վարքագծի կանոնագիրք հավելվածի տեքստը:

Ապրանքների առևտուր գլխի քննարկման ընթացքում Կողմերը համաձայնեցրին «Արտահանման և ներմուծման լիցենզավորում» և «Ապրանքների առևտրի գծով ենթակոմիտե» հոդվածները: Կողմերի միջև տարաձայնությունները հիմնականում կապված էին «Վերանորոգված ապրանքների ներմուծում», «Վերականգնված ապրանքներ» և «Մաքսատուրքից ազատում» հոդվածների հետ: Համաձայմագրին կից ապրանքների ցանկերի մասով, որոնց հանդեպ Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ, պայմանավորվածություն ձեռք բերվեց մի շարք ապրանքների մասով մաքսատուրքի իջեցման հարցի վերաբերյալ:

Ապրանքների ծագման երկրի որոշման գլխի քննարկման արդյունքում Կողմերի միջև համաձայնություն ձեռք բերվեց թվով 11 հոդվածների մասով: Ապրանքների ծագման որոշման առանձնահատուկ չափորոշիչների Ցանկի

քննարկման ժամանակ հիմնականում քննարկվեցին 84-85 ԱՏԳ ԱԱ ապրանքային դիրքերին դասվող ապրանքները /արդյունաբերական ապրանքներ/, որի արդյունքում համաձայնություն ձեռք բերվեց թվով 850 ապրանքային դիրքերի մասով:

Մաքսային համագործակցություն և առևտրի դյուրացում գլխի տեքստը ընդհանուր առմամբ համաձայնեցվել է Կողմերի միջև:

Առևտրային պաշտպանիչ միջոցներ գլխի քննարկման արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել ԵԱՏՄ անդամ պետությունների համար նախընտրելի դրույթի սահմանման վերաբերյալ, որը, իր հերթին, ենթադրում է գնային պարտավորությունների նախագծի ներկայացման պարագայում խորհրդատվությունների անցկացման հնարավորություն, ինչպես նաև de-minimis կանոնի օգտագործում կրկնակի հետաքննությունների անցկացման ժամանակ:

Առևտրում տեխնիկական խոչընդոտներ գլխի քննարկման արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվել մի շարք դրույթների մասով, մասնավորապես՝ «Թափանցիկություն» հոդվածի այն դրույթների մասով, որոնք վերաբերում են տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի հրապարակմանը:

Սանիտարային և Ֆիտոսանիտարային միջոցներ գլխի քննարկման ժամանակ համաձայնություն է ձեռք բերվել գրեթե բոլոր հոդվածների մասով: Կողմերը պայմանավորվել են նշյալ գլխում ներառել նաև «Ներմուծման ստուգումներ» և «Կոնտակտային կետեր և իրավասու մարմիններ» հոդվածները:

Էլեկտրոնային առևտուր գլխի քննարկման արդյունքում Կողմերի միջև համաձայնություն ձեռք բերվեց «Էլեկտրոնային ստորագրություններ», «Էլեկտրոնային առևտրում էլեկտրոնային փաստաթղթերի կիրառում», «Էլեկտրոնային առևտրում տեղեկատվության անդրսահմանային փոխանակում», «Սպառողների շահերի պաշտպանության» և «Համագործակցություն» հոդվածների ներառման վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Բանակցությունների արդյունքում նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց առ այն, որ նշված Համաձայնագրի շուրջ կայանալիք հերթական վեցերորդ փուլը կանցկացվի 2018 թվականի նոյեմբեր/դեկտեմբեր ամիսներին Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից որևէ մեկի տարածքում:

Կողմերի միջև ստորագրվեց Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների հինգերորդ փուլի արդյունքներով կազմված Արձանագրություն:

9. Գործուղվող՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության Եվրասիական տնտեսական միության
և արտաքին առևտրի վարչության պետ
Նաիրա Կարապետյան

10. Ստորագրություն, ամսաթիվ

26.09.2018 թ.